ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .՝ dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

18 Հուլիս 2017 թվական N 77

ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՏԵՍՔԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2009 թվականի սեպտեմբերի 17-ի թիվ 1066-Ն որոշմամբ հաստատված կարգի 7-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով հողամասի սեփականատիրոջ դիմումը՝

Որոշում եմ՝

Ձորաղբյուր համայնքի վարչական տարածքում գտնվող Կորյուն Վրեժի Հախնազարյանին սեփականության իրավունքով պատկանող, ծածկագիր՝ 07-042-0338-0002, 1.58082հա գյուղատնտեսական նշանակության 4-րդ կարգի ջրովի վարելահողի հողատեսքը փոփոխել ավելի բարձրարժեք հողատեսքի՝ 4-րդ կարգի այգու:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորագյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» Հուլիսի 2017 թվականի N 78

ԿՈՐՅՈՒՆ ՎՐԵԺԻ ՀԱԽՆԱԶԱՐՅԱՆԻՆ ՀԱՏԿԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻՑ ԱՎԵԼ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Կորյուն Վրեժի Հախնազարյանի դիմումը և ղեկավարվելով «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» 2002 թվականի դեկտեմբերի 25-ի Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, նկատի ունենալով այն հանգամանքը, որ Կորյուն Վրեժի Հախնազարյանին հատկացված հողամասից կադաստրային քարտեզագրման արդյունքում հաշվառված ավել օգտագործվող հողամասը նախատեսված չէ այլ նպատակային և գործառնական նշանակությամբ օգտագործելու համար, այն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ընդգրկված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման, կամ անվտանգության, ինչպես նաև հնագիտական պատմամշակութային հողերի պահպանման գոտիներում, չի սահմանափակում այլ անձանց իրավունքները, չի առաջացնում սերվիտուտ և հաշվի առնելով, որ առաջին պետական գրանցման աշխատանքներից չեն օգտվել և 1992 թվականից նշված հողամասը փաստացի օգտագործում է՝

Որոշում եմ

1. Ճանաչել Կորյուն Վրեժի Հախնազարյանի սեփականության իրավունքը փաստացի օգտագործվող 1.58082հա մակերեսով այգու նկատմամբ, որը փաստացի նրա կողմից օգտագործվել է մինչև 2001 թվականի մայիսի 15-ը:

2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա.Վ.ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱՂԲՅՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի
Ձորաղբյուր համայնք,Ազատության 21,հեռ.`060-28-94-09
էլ.փոստ .` dzorackbyur@mail.ru

ՈՐՈՇՈՒՄ

20 Հուլիսի 2017 թվականի N 79

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8.1,10,11,13-րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով, որ Արմեն Բալդրյանին և Անահիտ Մանվելյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Ազատության փողոց 2-րդ նրբ. թիվ 11 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1. Արմեն Բալդրյանին և Անահիտ Մանվելյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ գյուղ Ձորաղբյուր Ազատության փողոց 2-րդ նրբ. թիվ 11 հողամասում գտնվող S=266.05քմ «ինքնակամ բնակելի տունը», S=185.4քմ «ինքնակամ շինությունները» և 2 դուռ ինքն. ձևափոխված բացվածքի, 2 պատուհան ինքն. ձևափոխված բացվածքի և ինքն. բացված 1 պատուհանը համարել օրինական՝ հիմք ընդունելով <<ԳԻՍ-ԱՐՏ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Պարտավորեցնել նրան համայնքի բյուջե վճարելու 266.05քմ ինքնակամ բնակելի տան համար, 1քմ-ը 2600 դրամ, ընդամենը՝ 691730 /վեց հարյուր իննսունմեկ հազար յոթ հարյուր երեսուն/ դրամ, 185.4քմ ինքնակամ շինությունների համար, 1քմ-ը 1560 դրամ, ընդամենը՝ 289230 /երկու հարյուր ութսունինը հազար երկու հարյուր երեսուն/ դրամ:

3. Գումարը պետք է փոխանցվի Ձորաղբյուրի համայնքապետարանի, Աբովյանի ՏԳԲ, 900105221213՝ ինքնակամ կառույցների պետ գրանցում, հաշվեհամարին:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 30-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՄՈՒՔԱՅԵԼՅԱՆ